ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14

Հեռ. 6 – 00- 89 10.11.2011թ

ԱՅԳԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ջեկ. Վ. Ղուկասյան)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ

1. Այգավանի գյուղապետարանի ծառայողական ավտոմեքենան՝ Գազ-311000 մակնիշի, վաճառել ուղղակի վաճառքով նույն գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Միսակ Գևորգի Հարությունյանին, գույքի գնահատման ակտով սահմանված գնով՝ 475000 դրամով:

2. Ավտոմեքենայի հաշվառման ծախսերը թողնել գնորդի վրա:

Ավագանու անդամներ՝

Հ.Արամյան ---- կողմ Ռ.Գրիգորյան ---- կողմ

Վ.Հարությունյան --- կողմ Ս.Կարապետյան --- կողմ

Գ.Հարությունյան --- կողմ Կ.Հովհաննիսյան --- կողմ

Մ.Հակոբյան --- կողմ

ԱՅԳԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16

Հեռ. 6 – 00- 89 10.11.2011թ

ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՆՈՒՇ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Վ. Ղուկասյան)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջներով

որոշում

1. Հավանություն տալ Այգավան գյուղի բնակիչ Վ.Ավետիսյանի դիմումին իրեն պատկանող 1000 քմ. տնամերձ հողամասի գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատումից՝ հասարակականի փոխվելու համար:

2. Խնդրել Արարատի մարզպետին տալ համաձայնություն փոխելու վերոհիշյալ հողամասի գործառնական նշանակությունը:

Ավագանու անդամներ՝

Հ.Արամյան ---- կողմ Ռ.Գրիգորյան ---- կողմ

Վ.Հարությունյան --- կողմ Ս.Կարապետյան --- կողմ

Գ.Հարությունյան --- կողմ Կ.Հովհաննիսյան --- կողմ

Մ.Հակոբյան --- կողմ

ԱՅԳԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 17

Հեռ. 6 – 00- 89

10.11.2011թ

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ.Վ.Ղուկասյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջներով

Որոշում

1.Հավանություն տալ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմային, ըստ որի առաջարկվում է իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 0.47 հա գյուղատնտեսական նշանակության հողերից՝ 0.3 հա պտղատու այգին փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա հասարակական կառուցապատման նպատակով, առևտրի և սպասարկման օբյեկտների կառուցման համար:

2. Խնդրել ՀՀ.Արարատի մարզպետին տալ համապատասխան ընթացք:

Ավագանու անդամներ՝

Հ.Արամյան ---- կողմ Ռ.Գրիգորյան ---- կողմ

Վ.Հարությունյան --- կողմ Ս.Կարապետյան --- կողմ

Գ.Հարությունյան --- կողմ Կ.Հովհաննիսյան --- կողմ

Մ.Հակոբյան --- կողմ

ԱՅԳԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ